



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

No 1688-Կ

«25» 10 2024

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԵԿՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ  
(ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ  
ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ «ՀՈՒՅՍ ԵՎ ԱՊԱԳԱ» ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ  
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 973-Ն հրամանով հաստատված կարգի 5-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի N 1643-Ա հրամանով ձևավորված հանձնաժողովի եզրակացությունը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով 2024 թվականին վերապատրաստում իրականացնելու համար երաշխավորել Ուսուցման ազգային հիմնադրամին:

2. «Հույս և Ապագա» երեխաների աջակցության և զարգացման բարեգործական հասարակական կազմակերպության հայտը մերժել՝ վերապատրաստման ծրագրում և պլանում առկա թերությունների հիմքով:

3. Հանձնարարել նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ պաշտոնապես հրապարակել Ուսուցման ազգային հիմնադրամի տվյալները նախարարության պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանին:

**ՆԱԽԱՐԱՐ՝**

**Ժ.ԱՆԴՐԵԱՅԱՆ**

10/25/2024



ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169